Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Բնական գազ սպառող բնակիչ-բաժանորդների ներփնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրության վերաբերյալ

Երևան
2008

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Բնական գազ սպառող բնակիչ-բաժանորդների ներփնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրության վերաբերյալ

## *1. Ընդհանուր դրույթներ*

Ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 10-ի №648Լ որոշմամբ հաստատված «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի» 10-րդ կետի, սույն թվականի փետրվարի 15-ից ապրիլի 15-ը իրականացվել է բնական գազ սպառող բնակիչ-բաժանորդների ներփնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրություն:

Ուսումնասիրությունն իրականացվել է հանձնաժողովի աշխատակազմի լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչության և սպառողների հետ կապերի բաժնի աշխատակիցներից կազմված խմբի կողմից, որի աշխատանքներին ներգրավվել են «Բնակ-կոմունալ ոլորտի աշխատողների միություն», «Սպառողների իրավունքների պաշտպանություն» և «Սպառողների ասոցիացիա» հասարական կազմակերպությունների ներկայացուցիչները, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի հետ համաձայնեցված «Բնական գազ սպառողների ներփնային համակարգերի տեխնիկական սպասարկման գործընթացի ուսումնասիրության ծրագրով»: (Հավելված № 1)

Ուսումնասիրության ծավալը ներառել է փաստաթղթային ուսումնասիրություն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի, «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի և 8 տարածքային ծառայությունների գրասենյակներում, ինչպես նաև ուսումնասիրություն այդ ծառայությունների տարածքում բնակիչ-բաժանորդների բնակարանները ընտրանքային կարգով կատարված այցելությունների միջոցով:

## *2. Ուսումնասիրությունների պլանավորումը*

Ուսումնասիրությունների ծրագիրը կազմվել է, հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի կողմից 2006 թվականին իրականացված «Բնական գազ սպառողների ներփնային համակարգերի տեխնիկական սպասարկման գործընթացի ուսումնասիրության» արդյունքները, դրանց քննարկման ընթացքում առաջ եկած հարցերը, 2007 թվականի ընթացքում ներփնային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման, ինչպես նաև բնական գազի օգտագործմանն առնչվող դժբախտ պատահարների վերաբերյալ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներկայացրած տեղեկատվությունը: Հաշվի են առնվել նաև

սպառողների և հասարակական կազմակերպությունների կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքները և հարցադրումները:

Ուսումնասիրությունների ծրագրի 2-րդ կետում նշված ուղղությունները ներառվել են ծրագրում հաշվի առնելով դրանց կարևորությունը բնակիչ-բաժանորդների ներտնային գազասպառման համակարգերի անվտանգությունն ապահովելու տեսակետից: 2007 թվականի ընթացքում տեղի ունեցած 24 դժբախտ պատահարներից 23-ի պատճառը եղել է կենցաղում բնական գազից օգտվելու անվտանգության կանոնների խախտումը բնակիչների կողմից:

2007 թվականի ընթացքում ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման, ինչպես նաև բնական գազի օգտագործման հետ առնչվող 2007 թվականին տեղի ունեցած դժբախտ պատահարների վերաբերյալ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի տեղեկատվության վերլուծության արդյունքում ընտրվել են «Էց-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ի այն 8 տարածքային ծառայությունները, ուր պլանավորվել է իրականացնել ծրագրի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված ուսումնասիրությունները:

Հաշվի առնելով հարցումների վիճակագրական արդյունքների մշակման մեթոդաբանությունը, և նպատակ ունենալով 95 տոկոս վստահությամբ ստացված արդյունքները 2-3 տոկոսի ճշտությամբ տարածել բնակիչ-բաժանորդների ամբողջ թվի վրա, որոշվեց հարցումները իրականացնել 1000 բնակարանում՝ որոնք, կախված տվյալ ծառայության կողմից սպասարկվող բաժանորդների թվից, ըստ 8 տարածքային ծառայությունների (ՏԾ) բաշխվել են ստորև բերված համամասնությամբ:

| № | Տարածքային ծառայությունը | Սպասարկվող բաժանորդների թիվը | Բաժանորդների թիվը, ում մոտ նախատեսվում է իրականացնել հարցումները | Ուսումնասիրությունների ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|
| 1 | Երևան | 190 205 | 500 | 17.03 – 28.03 |
| 2 | Գյումրի | 32 129 | 100 | 13.03 – 14.03 |
| 3 | Լոռի | 48 300 | 120 | 11.03 – 12.03 |
| 4 | Աբովյան | 29 829 | 80 | 3.03 - 4.03 |
| 5 | Կոտայք | 18 085 | 60 | 5.03 |
| 6 | Արմավիր | 20 007 | 60 | 6.03 |
| 7 | Արարատ | 10 732 | 40 | 7.03 |
| 8 | Վայոց Ձոր | 5 950 | 40 | 31.03 |
| 9 | ԸՆԴԱՄԵՆԸ | 355 237 | 1 000 | |

Բնակիչ-բաժանորդների մոտ գազասպառման համակարգի սպասարկման գործընթացի վերաբերյալ հարցումներն անցկացնելու համար մշակվել է «Բնակիչ - բաժանորդների մոտ գազասպառման համակարգի սպասարկման գործընթացի ուսումնասիրության հարցաթերթիկը»: Հավելված № 2

## *3. Ուսումնասիրությունների իրականացումը*

Բնական գազ սպառող բնակիչ-բաժանորդների ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրություններն աշխատանքային խումբն իրականացրել է ծրագրով նախատեսված ուղղությունների ամբողջ ծավալով և նախանշած ժամկետներում:

2007 թվականի հուլիսի 2-ից Երևանում, Շիրակի և Լոռու մարզերում և Գյումրի քաղաքում, իսկ օգոստոսի 1-ից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գազասպառման ներտնային համակարգերի սպասարկումն իրականացնելու պարտավորությունը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «ԷՑ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի 2007 թվականի հուլիսի 2-ին կնքված հանձնարարության պայմանագրի հիման վրա իրականացվել է «ԷՑ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների կողմից:

«ԷՑ-Ի-ՋԻ-սերվիս» ընկերությունը ընտրվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006թ N139 որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան: Դրանք են.

1. Աշխատանքային տարածքի (սեփական կամ վարձակալած), նյութատեխնիկական բազայի, շուրջօրյա կամ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և «1-04» վթարակարգավարական ծառայության միջև համապատասխան պայմանագրի դեպքում ժամը $9^{00}$-ից մինչև $18^{00}$-ը հերթապահությամբ հեռախոսային կապի առկայություն.
2. Մատակարարի ներքին իրավական ակտերին համապատասխան, 3 տարվա աշխատանքային փորձ ունեցող տեխնիկական ղեկավարի և մասնագիտական ուսուցում անցած՝ գիտելիքների ստուգման վկայական ունեցող անձնակազմի առկայություն.
3. Կազմակերպության կանոնադրության և իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի առկայություն.
4. Տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների հագեցվածություն (արտահագուստ, գործիքներ, քայուղեր և անհատական պաշտպանության միջոցներ).
5. Առնվազն 2 մլն դրամ կանոնադրական կապիտալի առկայություն:

Հանձնարարության պայմանագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «ԷՑ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի համար պայմանագրով սահմանված պարտավորությունները

ընդգրկում են «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» և «Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրով» սահմանված պահանջները: Նշենք, որ պայմանագրով սահմանված է սպասարկման աշխատանքների դիմաց վճարման մեխանիզմ, որի համաձայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն վճարում է «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ին, վերջինիս կողմից ներկայացված ամենամսյա հաշվետվության հիման վրա՝ ըստ բաժանորդների մոտ փաստացի կատարված այցերի քանակի: Ընդ որում, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ընտրանքային կարգով իրականացվող այցերի միջոցով ստուգում է «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած կատարողականը սպասարկման ծավալների մասին:

Պայմանագրով սահմանված է նաև սպասարկողի կատարած աշխատանքների ծավալը և կատարման որակը «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի կողմից ուսումնասիրելու (վերահսկելու) իրավունքը: 2007 թվականի ընթացքում «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետի հրամանով իրականացվել է «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կողմից սպասարկման աշխատանքների կազմակերպման ուսումնասիրություն, սակայն աշխատանքային խմբի կարծիքով նման ուսումնասիրությունները պետք է լինեն շարունակական և անհրաժեշտ է մշակել սպասարկման աշխատանքների ծավալի և դրանց կատարման որակի նկատմամբ վերահսկման գործուն մեխանիզմ՝ սահմանելով ուսումնասիրությունների ծավալները և պարբերականությունը:

«ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների կողմից գազասպառման ներտնային համակարգերի սպասարկման աշխատանքներն իրականացվում են ընկերության տնօրենի և գլխավոր ճարտարագետի կողմից հաստատված կանոնակարգերի, ընթացակարգերի և հրահանգների հիման վրա: Դրանք մշակված են «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների», «Կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման պայմանագրին» հավելված «Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի» և «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի «Բնակելի տների և օբյեկտների գազասպառման կենցաղային համակարգերի տեխնիկական սպասարկում» կազմակերպության ստանդարտով սահմանված պահանջների հիման վրա և սահմանում են ընկերության ստորաբաժանումների (տարածքային ծառայությունների) ղեկավարների և մասնագետների գործառույթները: Մասնավորապես, «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 2007 թվականի հուլիսի 23-ին հաստատվել են տարածքային ծառայության կանոնակարգը, տարածքային ծառայության պետի, պետի տեղակալի, տեղամասի վարպետի և փականագործի պաշտոնեական հրահանգները:

2007 թվականի ընթացքում սպասարկման աշխատանքները իրականացվել են «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի կազմած ժամանակացույցի համաձայն՝ ընդհուպ մինչը յուրաքանչյուր փականագործի համար անհատական: Կատարված այցերի վերաբերյալ

յուրաքանչյուր փականագործի հաշվետվության հիման վրա, հաջորդ ամսվա ժամանակացույց-հանձնարարականում ներառվում են այն բնակարանները, որտեղ տարբեր պատճառներով (հիմնականում փակ դռներ) չի կատարվել սպասարկման աշխատանքները:

2007 թվականի ընթացքում բնակիչ-բաժանորդերի բնակարաններ կատարված այցերի վերաբերյալ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ներկայացրել է տեղեկանք (Հավելված №3): Դրանում տեղ գտած տեղեկատվության համաձայն.

2007 թվականի համար 501140 բաժանորդների մոտ առնվազն 1 002 280 այցի փոխարեն կատարվել է 887164 այց կամ 88.5%-ը, որից 468122 այց կամ 52.77 %-ը հունվար-հուլիս ամիսներին կատարել են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի աշխատակիցները, իսկ 419042 այց, կամ 47.33 %-ը օգոստոս-դեկտեմբեր ամիսներին կատարել են «Էյ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի աշխատակիցները:

2008 թվականի համար «Էյ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կազմած ժամանակացույցը նախատեսում է 516 272 բաժանորդի մոտ կատարել 1 135 719 այց: (Հավելված № 4)

2008 թվականի 3 ամիսների ընթացքում, ըստ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներկայացրած տեղեկատվության «Էյ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետները կատարել են 232188 այց կամ առաջին եռամսյակի համար պլանավորված 270959 այցերի 85.7 %-ը:

Հանձնարարության պայմանագրի 3.4.1 կետի համաձայն «Էյ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ն իրավունք ունի ինքնուրույն որոշել պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ մասնագետների քանակը: 2008 թվականի փետրվարի 1-ի դրությամբ «Էյ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի 8 տարածքային ծառայությունների 372 աշխատակիցներից 269 փականագործներ են: Նշված ծառայությունների աշխատակիցները սպասարկում են 355247 բաժանորդ: Մեկ փականագործը սպասարկում է միջինը 1320 բաժանորդ:

| № | Տարածքային ծառայությունը | Սպասարկվող բաժանորդների թիվը | Փականագործների թիվը առ 01.02.08թ | Մեկ փականագործի կողմից սպասարկվող բաժանորդների թիվը |
|---|---|---|---|---|
| 1 | Երևան | 190 205 | 118 | 1612 |
| 2 | Գյումրի | 32 129 | 25 | 1285 |
| 3 | Լոռի | 48 300 | 46 | 1050 |
| 4 | Աբովյան | 29 829 | 27 | 1105 |
| 5 | Կոտայք | 18 085 | 17 | 1064 |
| 6 | Արմավիր | 20 007 | 20 | 1000 |
| 7 | Արարատ | 10 732 | 9 | 1190 |
| 8 | Վայոց Ձոր | 5 950 | 7 | 850 |

Հանձնարարության պայմանագրի 3.3.4 կետի համաձայն «Էյ-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ն ստանձնել է գազօգտագործող սարքավորումների միացման ճշտության վերահսկողության և այդ մասին համապատասխան ակտ կազմելու գործառույթը: Ակտերը կազմում են ընկերության փականագործները բնակիչ-բաժանորդների բնակարանները կատարվող այցերի ընթացքում՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրենի կողմից հաստատված դասակարգչի հիման վրա: 2007 թվականի ընթացքում, ըստ «Էյ-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ի տեղեկատվության հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է թվով 70956 ակտ: 2008 թվականի փետրվարի 1-ի դրությամբ այդ թիվը կազմել է 93936-ը: Հավելված № 5

Կազմված ակտերի 25%-ը վերաբերում է գազասարքերի ինքնակամ տեղադրման դեպքերին, 20%-ը՝ նախագծից շեղման կամ սարքի բացակայության դեպքերին, 14 %-ը՝ գազասարքերը եռաբաշխիչով միացնելու դեպքերին: Աշխատանքային խումբը ընտրանքային կարգով ուսումնասիրել է փականագործների կազմած «Գազասպառման կենցաղային համակարգում խախտումների վերացման կամ գազամատակարարման ընդհատման ակտերը», դրանցով արձանագրված խախտումների մոտ 70%-ը վերաբերում է այնպիսի թերություններին (խախտումներին), որոնց վերացումը չի պահանջում բարձր մասնագիտական հմտություններ կամ զոդման սարքավորում: Դրանք կարող են վերացվել տեղում՝ այց կատարող փականագործի ուժերով: Սակայն, գործող կարգի համաձայն խախտման ակտերը ներկայացվում են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի համապատասխան մասնաճյուղ: Վերջինս դրանք կրկին դասակարգում է ըստ խախտմանը արձագանքելու հրատապության և անմիջապես անդրադառնում է միայն այն ակտերին, որոնք պահանջում են գազազրկել բաժանորդներին կամ ապամոնտաժել անօրինական տեղադրված գազասարքը: Ակտերի մի մասն էլ վերադարձվում է կազմողին՝ որպես չհիմնավորված: Նման կարգը բերում է նրան, որ ԳԳՄ-ներում կուտակվում են բազմաթիվ ակտեր, որոնցում արձանագրված խախտումների վերացումը անթույլատրելի ձգձգվում է: Ուսումնասիրությունների ընթացքում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «Էյ-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների հետ քննարկումների արդյունքում վերջիններիս ուղադրությունն է հրավիրվել խախտումների դասակարգչի, ինչպես նաև խախտումների վերաբերյալ ակտերի կազմման և արձանագրված խախտումների վերացման կարգի լրամշակման անհրաժեշտության վրա:

«Էյ-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ի տեխնիկական ղեկավարի հրամանով հաստատվել է փականագործի հրահանգավորման թերթիկ, որում ներառված պահանջները սպասարկման աշխատանքների ծավալների վերաբերյալ հիմք են հանդիսանում փականագործների ուսուցման և հրահանգավորման համար: Նշենք, որ հրահանգավորման թերթիկը մասնագիտական կարողությունների վերաբերյալ

պահանջներին զուգահեռ սահմանում է նաև վարվեցողության կանոնները, որոնք փականագործը պետք է պահպանի բնակիչ-բաժանորդների մոտ կատարվող այցերի ընթացքում: Փականագործների հրահանգավորումը և գիտելիքների ստուգումը ձևակերպվում է հատուկ հրահանգավորման մատյաններում՝ հրահանգավորողի և փականագործի ստորագրություններով: Պետք է նշել, որ ըստ հրահանգավորման մատյաններում առկա գրառումների, ցանկացած հրահանգավորում իրականացվում է փականագործին ներկայացվող պահանջների ամբողջ ծավալով, ինչը չի կարող լինել արդյունավետ: Մեր կարծիքով անհրաժեշտ է հրահանգավորման թերթիկի ամեն կետի պահանջի վերաբերյալ հրահանգավորել առանձին:

Փականագործների և վարպետների հետ աշխատանքային խմբի անցկացրած զրույցները և սպասարկման աշխատանքների իրականացման վերաբերյալ նրանց գիտելիքները և հմտությունները բացահայտող վարժանքների արդյունքները ցույց տվեցին, որ հրահանգների դրույթների վերաբերյալ փականագործների գիտելիքները և բաժանորդներին հրահանգավորելու հմտությունները դեռևս բավարար չեն:

Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի 1.1 կետի ե) ենթակետի՝ ծխատար ուղիների զննում և անհրաժեշտության դեպքում մաքրում, պահանջի կատարումը 2007 թվականի ընթացքում իրականացնվել է հիմնականանում «Հայաստանի հրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության անդամ ընկերությունների միջոցով, որոնց հետ կնքված են համապատասխան ծառայությունները մատուցելու պայմանագրեր: Այդ ընկերությունների կողմից 2007 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկանքը բերված են Հավելված №6-ում: Ներկայումս, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների կողմից մշակվում է «Ծխատար ուղիների զննման և մաքրման աշխատանքների իրականացման հրահանգը» և կազմակերպել է ծխնելույզագործների ուսուցում, ինչը հնարավորություն կտա հետագայում սեփական ուժերով իրականացնել նշված կետի պահանջը:

«ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի Երևանի տարածքային ծառայությունում փականագործների կողմից այցերի ընթացքում հայտնաբերված թերությունները արդեն իսկ վերացվում են և ծխաօդատարները մաքրվում են ծառայության ծխնելույզագործների ուժերով:

Ուսումնասիրությունների ընթացքում, աշխատանքային խմբի, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների քննարկումների ընթացքում առաջարկվեց, որ որոշակի հստակեցման կարիք ունի համաձայնագրի 1.1 կետի ե) ենթակետով սահմանված պահանջը: Օրինակ, հետևյալ խմբագրությամբ.

ե) գազասարքի ծխախողովակի զննում, ծխաօդափար ուղիներում քարշի առկայության ստուգում և անհրաժեշտության դեպքում դրանց մաքրում (ծխաօդափար ուղիների մաքրումն ընդգրկում է այն բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ է կատարել ծխաօդափարում քարշն ապահովելու համար, այն է, մաքրել ծխաօդափարը այրման արգասիքներից մեխանիկական եղանակով (ծանրոցի օգնությամբ), ինչպես նաև վերացնել ցանկացած արգելք, բացառությամբ այն դեպքերի, որոնք կապված են ծխաօդափարի կառուցվածքային ամբողջության խաթարման հետ և որակվում են որպես սույն համաձայնագրի 1.2 կետում բերված աշխատանքներ):

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի սպասարկման 8 տարածքում իրականացվել են պատահական ընտրված բնակիչ-բաժանորդների հարցումներ նրանց բնակարաններ սպասարկող անձնակազմի կատարած այցերի և դրանց ընթացքում գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների վերաբերյալ: Անհրաժեշտ ենք համարում նշել հարցումների իրականացմանը «Բնակ-կոմունալ ոլորտի աշխատողների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների առավել ակտիվ մասնակցությունը: Բնակիչ-բաժանորդներից ստացված պատասխանների հիման վրա լրացվել են «Բնակիչ - բաժանորդների մոտ գազասպառման համակարգի սպասարկման գործընթացի ուսումնասիրության հարցաթերթիկները»: Հարցաթերթիկների մշակման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

2007 թվականի ընթացքում 1024 բաժանորդների մոտ կատարվել է 1559 այց: Ընդ որում, գազամատակարարման պայմանագրի բնակիչ-բաժանորդների օրինակում սպասարկման այցերի վերաբերյալ գրառումները առկա էին միայն 40.7 % բնակիչների մոտ: Նշենք, որ թվով 62 (6.1 %) բնակարանում, ըստ բնակիչների, 2007 թվականին տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար այց ընդհանրապես չի կատարվել:

2007 թվականին իրականացված 1559 այցերի ընթացքում փականագործները կատարել են հետևյալ աշխատանքները՝

ա) գազասարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ հրահանգավորում – 1227 դեպքում՝ կատարված այցերի 78.7 %,

բ) ստուգում օճառափրփուրով - 1107 դեպքում՝ կատարված այցերի 71.0 %,

գ) սարքավորումների զննում – 1288 դեպքում՝ կատարված այցերի 82.6 %,

դ) ծխատարի(օդատարի) զննում – 546 դեպքում՝ կատարված այցերի 43.8 %:

2007 թվականի ընթացքում գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման համար «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի աշխատակիցների այցերի քանակի և կատարված աշխատանքների վերաբերյալ բնակիչ-բաժանորդներից ստացված տեղեկատվությունը ամփոփ տեսքով բերված է Հավելված-7-ում:

## 4. Համեմատական վերլուծություն

2007 թվականի արդյունքներով գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման վերաբերյալ արձանագրված ցուցանիշները աշխատանքային խումբը համեմատել է 2006 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներկայացրած տեղեկատվության, ինչպես նաև 2006 թվականի հոկտեմբերին իրականացված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրված որոշ ցուցանիշների հետ:

Ըստ ընկերության ներկայացրած տեղեկատվության, 2007 թվականի ընթացքում տեխնիկական սպասարկման համար կատարված այցերի ցուցանիշը 2006 թվականի համեմատ աճել է 11.8%-ով: 2006 թվականի ընթացքում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի մասնագետների կողմից իրականացվել էր պահանջվող այցերի քանակի 76.7%-ը. իսկ 2007 թվականի արդյունքներով՝ 88.5%-ը: Ընդ որում, 2006 թվականի ուսումնասիրությունների ընթացքում արձանագրված առավել ցածր ցուցանիշ ունեցող մասնաճյուղերում այդ աճը կազմել է. Երևանում՝ 24.7%, Տավուշում՝ 21.1%, Արարատում՝ 17.8%:

Նկատելի է նաև 2007 թվականի ընթացքում կատարված սպասարկման աշխատանքների որակի բարձրացման միտումը 2006 թվականի համեմատ: Ըստ աշխատանքային խմբի մոտ հարցումների արդյունքում ձևավորված կարծիքի, որակի բարելավումը ակնառու է դարձել «ԷՑ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ին սպասարկման աշխատանքների կատարման պարտավորությունը փոխանցվելուց հետո: Ինչը սակայն չի նշանակում, որ բացթողումներ կամ թերացումներ «ԷՑ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների կատարված աշխատանքների ուսումնասիրության ընթացքում չի արձանագրվել: Ծխաօդափարների զննումների կատարման ցուցանիշը շարունակում է մնալ մտահոգիչ, նույնիսկ հաշվի առնելով արձանագրված որոշակի առաջընթացը՝ 2007 թվականին 43.8 տոկոսը 2006 թվականի 0 տոկոսի դիմաց,:

2006 թվականի ուսումնասիրությունների ծրագրում ներառված էր նաև պայմանագրերի վերակնքման գործընթացի ուսումնասիրությունը, որի ավարտի մասին «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն տեղեկատվություն է ներկայացրել հանձնաժողով 2007 թվականի հունվարին: Նշենք, որ վերջին ուսումնասիրությունների ընթացքում, բոլոր 1024 բնակիչ-բաժանորդի մոտ աշխատանքային խումբը փաստել է նոր նմուշի պայմանագրի առկայությունը:

2007 թվականի մայիս-հուլիս ամիսներին «Հասարակական պաշտպանություն միություն» (ՀՊՄ) հասարակական կազմակերպությունը Երևան քաղաքում իրականացրել է «Գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մոնիթորինգ», որի արդյունքների վերլուծությունը ներկայացրել է հանձնաժողով: Հանձնաժողովի աշխատանքային խմբի 2008 թվականի

մարտ ամսին և վերը նշված մոնիթորինգի ընթացքում կատարված հարցումների արդյունքների համեմատությունը նույնպես թույլ է տալիս եզրակացություն անել, որ Երևան քաղաքում գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների համար կատարվող այցերի քանակը և իրականացվող աշխատանքների որակը աճել է: Այս կարծիքը հիմնավորվում է հետևյալ թվերով.

ա) գազասարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ հրահանգավորում՝ 78.7%, համապատասխանաբար ՀՊՄ-ի հաշվետվությունում արձանագրված 56 %-ի դիմաց,

բ) ստուգում օճառափրփուրով՝ 71% համապատասխանաբար ՀՊՄ-ի հաշվետվությունում արձանագրված 35%-ի դիմաց

գ) սարքավորումների զննում՝ 82.6% համապատասխանաբար ՀՊՄ-ի հաշվետվությունում արձանագրված 62%-ի դիմաց,

դ) ծխատարի(օդատարի) զննում՝ 43.8% համապատասխանաբար ՀՊՄ-ի հաշվետվությունում արձանագրված 27%-ի դիմաց:

## 5. Եզրակացություններ

2008 թվականի փետրվարի 15-ից ապրիլի 15-ը իրականացված բնական գազ սպառող բնակիչ-բաժանորդների ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրությունների արդյունքում աշխատանքային խումբը եկել է հետևյալ եզրակացությունների.

*1. Բնակիչ-բաժանորդների ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքները «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն մինչև 2007 թվականի հուլիս-օգոստոս ամիսները իրականացրել է ԳԳՄ-ների անձնակազմի ուժերով: Այնուհետև «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի միջոցով՝ 2007 թվականի հուլիսի 2-ին կնքված համձնարարության պայմանագրով: Հարկանշական է, որ «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կողմից ծավալած աշխատանքների արդյունքում 2007 թվականի 5 ամիսների ընթացքում (օգոստոս-դեկտեմբեր) կատարվել է սպասարկման աշխատանքների փաստացի իրականացված ծավալի 65%-ը:*

*2. Պայմանագրով «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի համար սահմանված պարտավորությունները ընդգրկում են «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» և «Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրով» ներտնային գազասպառման համակարգերի սպասարկումը իրականացնելու բոլոր պահանջները: Հարկ ենք*

*համարում նշել, որ հանձնարարության պայմանագրով չի սահմանվել «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կատարած աշխատանքների ծավալի և կատարման որակի «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի կողմից վերահսկման մեխանիզմ:*

*3. Բնակիչ-բաժանորդների ներփնային գազասպառման համակարգերի սպասարկող ընկերության («ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ) ընտրությունը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն կատարել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006թ N139 որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան:*

*4. Սպասարկման աշխատանքները «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կողմից իրականացվում են ընկերության տնօրենի և գլխավոր ճարտարագետի կողմից հաստատված կանոնակարգերի, ընթացակարգերի և հրահանգների հիման վրա: Դրանք մշակված են «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների», «Ներփնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի» և «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի սպանդարտով սահմանված պահանջների հիման վրա:*

*5. «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից հաստատվել է գազասպառման կենցաղային համակարգերի տեխնիկական սպասարկման հրահանգ, որով սահմանված է նաև գազասպառման համակարգերի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ բաժանորդներին հրահանգավորելու ծավալը՝ ներառում է գազամատակարարման պայմանագրի «Ներփնային համակարգի օգտագործման և կենցաղում բնական գազից օգտվելու անվտանգության (այդ թվում՝ գազօգտագործող սարքավորումների) կանոնների և պահանջների հրահանգավորման թերթիկով» նախատեսված կետերը: Միաժամանակ, սպասարկող անձնակազմի հետ անցկացրած վարժանքների արդյունքները ցույց տվեցին, որ հրահանգների դրույթների իմացությունը լիարժեք չէ և բաժանորդներին հրահանգավորելու հմտությունները դեռևս բավարար չեն:*

*6. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներկայացրած հաշվետվության համաձայն, 501140 բնակիչ-բաժանորդների բնակարանները ժամանակացույցով սահմանված առնվազն 1 002 280 այցի փոխարեն կատարվել է 887164 այց կամ 88.5%-ը:*

*Ուսումնասիրությունների ընթացքում աշխատանքային խմբի կողմից ընտրանքային կարգով կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ*

*1024 բնակիչ-բաժանորդների բնակարաններ 2007 թվականի ընթացքում կատարվել է 1559 այց՝ պահանջվող առնվազն 1946 այցի փոխարեն, ինչը կազմում է 80.1 %-ը: Պայմանագրերում այցերի մասին գրառումները կազմում են 40.7 %: Համաձայն բնակիչների 62 (6.1%) բնակարանում, ներքնային սպասարկման ծառայություն ընդհանրապես չի մատուցվել:*

*Աշխատանքային խմբի կողմից արձանագրվել է նաև, որ 2007 թվականին իրականացված 1559 այցի ընթացքում սպասարկող անձնակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝*

*ա) գազասարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ հրահանգավորում – 1227 բաժանորդի մոտ՝ կատարված այցերի 78.7 % դեպքում,*

*բ) ստուգում օճառափրփուրով – 1107 բաժանորդի մոտ՝ կատարված այցերի 71.0 % դեպքում,*

*գ) սարքավորումների զննում – 1288 բաժանորդի մոտ՝ կատարված այցերի 82.6 % դեպքում,*

*դ) ծխատարի(օդատարի) ուղիների զննում – 546 բաժանորդի մոտ՝ կատարված այցերի 43.8 % դեպքում:*

*7. Ներքնային գազապատման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի 1.1 կետի ե) ենթակետի՝ ծխատար ուղիների զննում և անհրաժեշտության դեպքում մաքրում, պահանջների կատարման ցուցանիշը (կատարված այցերի 43.8% դեպքում) անհանգստացնող է և խիստ անբավարար բնակիչ-բաժանորդների անվտանգության ապահովման տեսանկյունից:*

## 6. Առաջարկություններ

*Հաշվի առնելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները աշխատանքային խումբը առաջարկում է՝*

***1.** Հանձնարարել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին՝*

- *ձեռնարկել միջոցներ գազապատման ներքնային համակարգերի տեխնիկական սպասարկման համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարումը ըստ ժամանակացույցի. ողջ ծավալով և պատշաճ մակարդակով ապահովելու ուղղությամբ,*
- *մշակել գազապատման ներքնային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների ըստ ժամանակացույցի կատարման, դրանց ծավալի և որակի նկատմամբ վերահսկման գործուն մեխանիզմ՝*

*սահմանելով ուսումնասիրությունների ծավալները և պարբերականությունը:*

***2.*** *Հանձնարարել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմին, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ համատեղ,*

- *լրամշակել «Ներփնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագիրը»՝ վերախմբագրելով համաձայնագրով սահմանված տեխնիկական սպասարկման աշխատանքների նկարագրությունը՝ պարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար:*
- *մշակել գազասպառման ներփնային համակարգերի տեխնիկական կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվության օրինակելի ձև՝ սպասարկման աշխատանքների ընթացիկ մոնիթորինգ իրականացնելու նպատակով:*

ԾՐԱԳԻՐ

**Բնական գազ սպառողների ներփնային համակարգերի**
**սպասարկման գործընթացի ուսումնասիրության**

**Ուսումնասիրվելու են.**

1. Մատակարարի ընտրությամբ և մրցույթով անցած սպասարկող կազմակերպության համապատասխանությունը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006թ N139 որոշմամբ սահմանված չափորոշիչներին:

- ***Աշխատանքային տարածքի (սեփական կամ վարձակալած), նյութատեխնիկական բազայի, շուրջօրյա կամ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և «1-04» վթարակարգավարական ծառայության միջև համապատասխան պայմանագրի դեպքում ժամը $9^{00}$-ից մինչև $18^{00}$-ը հերթապահությամբ հեռախոսային կապի առկայություն.***
- ***Մասնագիտական ուսուցում անցած՝ գիտելիքների ստուգման վկայական ունեցող անձնակազմի առկայություն, անհրաժեշտ մասնագետների քանակը.***
- ***Փականագործ մասնագետների հետ հանդիպում, մասնագետների կողմից սպասարկումը իրականացնելու պատրաստվածության ուսումնասիրություն.***
- ***Տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների հագեցվածություն (արտահագուստ, գործիքներ, քայուղեր և անհատական պաշտպանության միջոցներ):***

2. Սպասարկող կազմակերպության և մատակարարի միջև կնքված պայմանագրի առկայությունը: Տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման նկատմամբ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից վերահսկողության իրականացումը:

- ***Սպասարկման աշխատանքների վերահսկման մեխանիզմը.***
- ***Սպասարկող ընկերության կողմից «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ներկայացված հաշվետվություններ, կազմված ակտեր:***

3. Սպասարկման աշխատանքների իրականացման վերաբերյալ հաստատված ընթացակարգերի առկայությունը և դրանց համապատասխանությունը «Ներփնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրին» և «Գազամատակարարման և օգտագործման կանոններին»:

4. Գազասպառման համակարգերի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ բնակիչների պարբերական հրահանգավորումը:

- ***Հրահանգավորման կազմակերպումը.***
- ***Բաժանորդների հարցում:***

5. Սպասարկողի կողմից գազասպառման համակարգերի սպասարկման աշխատանքների իրականացումը սպառողների մոտ (ընտրովի):

- ***Բաժանորդների հարցում՝ յուրաքանչյուր բաժանորդի մոտ կատարված սպասարկման աշխատանքների ծավալների ճշգրտում.***
- ***Փականագործների այցերի քանակը բաժանորդի բնակարան մեկ տարվա ընթացքում:***

6. Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի 1.1 կետի ե) ենթակետի կատարման կազմակերպումը (ծխատար ուղիների զննում և անհրաժեշտության դեպքում մաքրում):

- ***Որ ընկերության կողմից է իրականացվում սպասարկումը.***
- ***Բաժանորդների հարցում՝ յուրաքանչյուր բաժանորդի սպասարկման աշխատանքների ծավալների ճշգրտում:***

# Հ ա ր ց ա թ ե ր թ ի կ

## Բնակիչ-բաժանորդների ներփնային գազասպառման համակարգի սպասարկման գործընթացի ուսումնասիրության

Հայ Ռուսգազարդ» ՓԲԸ-ի _________________________ մասնաճյուղ «_____» _______ 2008թ

| | Բաժանորդի հասցեն, հեռախոսի համարը | Մատակարարման Պայմանագրի առկայությունը *** | 2007թ ընթացքում այցելություն ների քանակը (թվով) | Սպասարկման աշխատանքների ծավալը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Անվտանգ օգտագործման հրահանգավորում *** | Ստուգում օճառա-փրփուրով *** | Սարքավո-րում ների | | Ծխապարի | |
| | | | | | | զննում *** | կարգա-բերում *** | զննում *** | մաքրում *** |
| 1 | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | |

Հարցման մասնակիցներ
1. ___________________________________ __________________
2. ___________________________________ __________________
3. ___________________________________ __________________

*** Նշվում է՝ + - եթե պատասխանը այո է

\- - եթե պատասխանը ոչ է

# Հաշվետվություն

***«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ԳԳ մասնաճյուղերի ներտնային գազի համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության իրականացրած աշխատանքների***

***դեկտեմբեր 2007 թ.***

| NN | ԳԳՄ անվանումը | Սպասարկվող բաժանորդների ընդհանուր քանակը | Այցելությունների քանակը տարեսկզբից «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից | Այցելությունների քանակը տարեսկզբից «ԷՅ-Ի-ՋԻ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից | Սպասարկված բաժ-ի քանակը տարեսկզբից | Սպասարկված բաժանորդների քանակը հաշվետու ամսում ըստ ժամանակացույցի | | | | Խախտումների համար կազմված ակտերի քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Նախատեսված | Սպասարկված | % | Փակ դռներ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Երևան | 190205 | 145919 | 158701 | 304620 | 29102 | 30206 | 103.8 | 3177 | 1644 |
| 2 | Գյումրի | 32129 | 28382 | 29165 | 57547 | 8238 | 5158 | 62.6 | 2996 | 1042 |
| 3 | Շիրակ | 13649 | 14596 | 12889 | 27485 | 2073 | 1276 | 61.6 | 882 | 595 |
| 4 | Լոռի | 48300 | 42983 | 48235 | 91218 | 12932 | 6870 | 53.1 | 3589 | 919 |
| 5 | Կոտայք | 18085 | 17972 | 12356 | 30328 | 5437 | 2928 | 53.9 | 1691 | 479 |
| 6 | Արովյան | 29829 | 32687 | 22249 | 54936 | 7531 | 5487 | 72.9 | 1651 | 1669 |
| 7 | Տավուշ | 18247 | 19363 | 14090 | 33453 | 4462 | 2839 | 63.6 | 1709 | 791 |
| 8 | Արմավիր | 20007 | 21941 | 15700 | 37641 | 3125 | 3082 | 98.6 | 357 | 680 |
| 9 | Էջմիածին | 21307 | 25635 | 17120 | 42755 | 3128 | 3070 | 98.1 | 432 | 768 |
| 10 | Արարատ | 10732 | 13042 | 9370 | 22412 | 1508 | 1296 | 85.9 | 325 | 152 |
| 11 | Արտաշատ | 27010 | 29163 | 21351 | 50514 | 6005 | 3834 | 63.8 | 657 | 2742 |
| 12 | Սյունիք | 17559 | 17673 | 14118 | 31791 | 3167 | 2653 | 83.8 | 457 | 362 |
| 13 | Գավառ | 10548 | 12359 | 8973 | 21332 | 3631 | 1835 | 50.5 | 500 | 843 |
| 14 | Մարտունի | 18798 | 19708 | 15735 | 35443 | 3721 | 2527 | 67.9 | 837 | 518 |
| 15 | Սևան | 8527 | 9284 | 6742 | 16026 | 2413 | 977 | 40.5 | 1438 | 183 |
| 16 | Արագածոտն | 10258 | 11588 | 7724 | 19312 | 2110 | 1830 | 86.7 | 403 | 70 |
| 17 | Վայոցձոր | 5950 | 5827 | 4524 | 10351 | 1280 | 868 | 67.8 | 523 | 103 |
| | ***Ընդամենը*** | **501140** | **468122** | **419042** | **887164** | **99863** | **76736** | 76.8 | 21624 | 13560 |

**ՏՏ և ԳՀ վարչության պետ** **Ա. Գրիգորյան**

11.01.08

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
տնօրեն Ս. Մինոյան
«07» 01 2008թ.

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2008թ «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ ԳԳՏՄ ծառայությունների ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման այցելությունների

| Անվանում | Բաժ քանակ առ 01.01.08թ. | 2008թ.-ին նախատեսվող սպասարկումների քանակը ըստ ամիսների | | | | | | | | | | | | Ընդհանուր սպասարկ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| Երևանի ԳԳՏՄԾ | 192570 | 34988 | 34192 | 35779 | 34459 | 33087 | 40492 | 38393 | 36820 | 39620 | 38032 | 36856 | 42817 | 445535 |
| Գյումրու ԳԳՏՄԾ | 32331 | 5177 | 6011 | 5756 | 5623 | 5091 | 5174 | 5342 | 6144 | 5885 | 5856 | 5352 | 5354 | 66765 |
| Շիրակի ԳԳՏՄԾ | 14087 | 2397 | 2467 | 2046 | 2506 | 2779 | 2207 | 2458 | 2562 | 2106 | 2618 | 2843 | 2248 | 29237 |
| Լոռու ԳԳՏՄԾ | 52606 | 9341 | 8705 | 9309 | 9044 | 9701 | 8277 | 9659 | 9015 | 10017 | 9304 | 10126 | 8703 | 111201 |
| Կոտայքի ԳԳՏՄԾ | 18908 | 3785 | 3293 | 3119 | 3207 | 4088 | 3195 | 4173 | 3676 | 3481 | 3568 | 4471 | 3498 | 43554 |
| Արովյանի ԳԳՏՄԾ | 31489 | 5432 | 5441 | 4947 | 5475 | 5327 | 5790 | 5637 | 5742 | 5279 | 5743 | 5767 | 6246 | 66826 |
| Արարատի ԳԳՏՄԾ | 10858 | 1707 | 1909 | 1940 | 1999 | 1833 | 1622 | 1748 | 1934 | 1969 | 2025 | 1901 | 1738 | 22325 |
| Արտաշատի ԳԳՏՄԾ | 27260 | 4099 | 4867 | 5052 | 4773 | 5224 | 4599 | 4408 | 5115 | 5565 | 5271 | 5636 | 4911 | 59520 |
| Արմավիրի ԳԳՏՄԾ | 20007 | 3213 | 3236 | 3515 | 3882 | 3316 | 3612 | 3539 | 3531 | 3813 | 4149 | 3581 | 3980 | 43367 |
| Էջմիածնի ԳԳՏՄԾ | 21307 | 3383 | 3634 | 3697 | 3921 | 3504 | 3576 | 3544 | 3795 | 3898 | 4081 | 3764 | 4336 | 45133 |
| Տավուշի ԳԳՏՄԾ | 19210 | 3333 | 3124 | 3331 | 3722 | 3521 | 3389 | 3575 | 3336 | 3510 | 3888 | 3656 | 3522 | 41907 |
| Գավառի ԳԳՏՄԾ | 11628 | 2015 | 1940 | 2017 | 1922 | 2023 | 1874 | 2033 | 1965 | 2033 | 1954 | 2067 | 1905 | 23748 |
| Մարտունու ԳԳՏՄԾ | 19301 | 2615 | 3552 | 3535 | 3906 | 3530 | 2561 | 2679 | 3611 | 3701 | 4041 | 3649 | 2640 | 40020 |
| Սևանի ԳԳՏՄԾ | 9742 | 1520 | 1498 | 1937 | 1690 | 1938 | 1593 | 1563 | 1558 | 1996 | 1841 | 1980 | 1619 | 20733 |
| Արագածոտնի ԳԳՏՄԾ | 10339 | 1942 | 1842 | 1454 | 1802 | 1821 | 1835 | 2051 | 1953 | 1536 | 1921 | 1992 | 2022 | 22171 |
| Սյունիքի ԳԳՏՄԾ | 18619 | 2878 | 3144 | 3723 | 3611 | 3297 | 2981 | 3066 | 3342 | 3859 | 3806 | 3664 | 3443 | 40814 |
| Վայոց Ձորի ԳԳՏՄԾ | 6010 | 990 | 1083 | 1049 | 1051 | 1177 | 916 | 1022 | 1116 | 1095 | 1093 | 1265 | 1006 | 12863 |
| *«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ* | *516272* | *88815* | *89938* | *92206* | *92593* | *91257* | *93693* | *94890* | *95215* | *99363* | *99191* | *98570* | *99988* | *1135719* |

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ գլխ. ճարտարագետ՝ Պ. Հերգնյան

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ԲԱ բաժնի պետ՝ Ա. Գրիգորյան

# ՏԵՂԵԿԱՆՔ

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ գործունեության ընթացքում ներտնային տեխնիկական սպասրկման ժամանակ արձանագրված խախտումների

առ. 01.02.2008թ.

| Անվանում | Ընդ. խախտ. քանակ | Տարանջատումն ըստ խախտման կոդերի | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 41 | 42 |
| *Էյ -Ջի-Սերվիս» ՍՊԸ* | *93936* | *61* | *36* | *54* | *149* | *19042* | *28* | *23080* | *6016* | *749* | *1574* | *3130* | *397* | *13452* | *411* | *1090* | *187* | *176* | *941* | *198* | *2036* | *388* | *220* | *5947* | *3003* | *11571* |
| Երևանի ԳԴՏՄ | 14767 | 10 | 7 | 2 | 47 | 3747 | 2 | 3030 | 226 | 41 | 324 | 575 | 17 | 2075 | 5 | 249 | 58 | 18 | 246 | 143 | 1089 | 79 | 60 | 1072 | 303 | 1342 |
| Արաբկիր-Աջափնյակ-Դավիթաշեն տեղ. | 4006 | 3 | 2 | 1 | 32 | 1029 | 0 | 759 | 48 | 9 | 71 | 181 | 9 | 601 | 0 | 37 | 51 | 2 | 103 | 105 | 210 | 32 | 23 | 185 | 31 | 482 |
| Էրեբ.-Նուբարաշեն-Կենտրոն տեղ. | 3303 | 3 | 1 | 0 | 2 | 911 | 0 | 979 | 80 | 9 | 88 | 158 | 0 | 506 | 0 | 3 | 0 | 1 | 13 | 7 | 203 | 14 | 14 | 191 | 44 | 76 |
| Շենգավիթ-Մալաթիա-Սեբաստիա տեղ. | 4352 | 4 | 4 | 1 | 10 | 1041 | 2 | 721 | 78 | 14 | 110 | 125 | 6 | 502 | 5 | 98 | 3 | 12 | 111 | 19 | 534 | 23 | 17 | 401 | 162 | 349 |
| Նոր Նորք-Մարաշ-Ջեյթուն-Ավան տեղ. | 3106 | 0 | 0 | 0 | 3 | 766 | 0 | 571 | 20 | 9 | 55 | 111 | 2 | 466 | 0 | 111 | 4 | 3 | 19 | 12 | 142 | 10 | 6 | 295 | 66 | 435 |
| Գյումրու ԳԴՏՄ | 7292 | 0 | 0 | 2 | 10 | 1562 | 0 | 2279 | 184 | 21 | 20 | 65 | 13 | 1415 | 2 | 2 | 1 | 1 | 3 | 0 | 121 | 8 | 4 | 873 | 7 | 699 |
| Գյումրու տեղ. | 7292 | 0 | 0 | 2 | 10 | 1562 | 0 | 2279 | 184 | 21 | 20 | 65 | 13 | 1415 | 2 | 2 | 1 | 1 | 3 | 0 | 121 | 8 | 4 | 873 | 7 | 699 |
| Լոռու ԳԴՏՄ | 10218 | 11 | 9 | 0 | 28 | 735 | 0 | 3960 | 669 | 99 | 174 | 576 | 84 | 1079 | 83 | 59 | 60 | 23 | 39 | 9 | 185 | 102 | 57 | 432 | 331 | 1414 |
| Վանաձորի տեղ. | 5141 | 3 | 5 | 0 | 24 | 120 | 0 | 2377 | 245 | 23 | 50 | 141 | 26 | 437 | 31 | 31 | 59 | 11 | 20 | 5 | 105 | 84 | 49 | 109 | 186 | 1000 |
| Ալավերդու տեղ. | 969 | 0 | 0 | 0 | 0 | 156 | 0 | 547 | 30 | 9 | 7 | 65 | 1 | 44 | 0 | 11 | 0 | 1 | 0 | 0 | 7 | 0 | 0 | 38 | 1 | 52 |
| Գուգարքի տեղ. | 565 | 0 | 0 | 0 | 0 | 166 | 0 | 143 | 67 | 4 | 0 | 21 | 3 | 26 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 9 | 1 | 0 | 32 | 8 | 85 |
| Ստեփանավանի տեղ. | 1506 | 1 | 1 | 0 | 1 | 58 | 0 | 550 | 70 | 26 | 84 | 119 | 29 | 247 | 35 | 9 | 1 | 9 | 3 | 0 | 34 | 13 | 2 | 35 | 103 | 76 |
| Տաշիրի տեղ. | 822 | 0 | 2 | 0 | 0 | 211 | 0 | 227 | 118 | 7 | 7 | 104 | 0 | 66 | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 | 4 | 2 | 0 | 16 | 10 | 46 |
| Սպիտակի տեղ. | 1215 | 7 | 1 | 0 | 3 | 24 | 0 | 116 | 139 | 30 | 26 | 126 | 25 | 259 | 17 | 6 | 0 | 2 | 16 | 4 | 26 | 2 | 6 | 202 | 23 | 155 |
| Կոտայքի ԳԴՏՄ | 3407 | 2 | 0 | 1 | 0 | 634 | 4 | 438 | 69 | 26 | 29 | 51 | 6 | 1141 | 26 | 35 | 1 | 19 | 13 | 2 | 3 | 14 | 8 | 77 | 174 | 634 |
| Հրազդանի տեղ. | 1652 | 1 | 0 | 0 | 0 | 419 | 4 | 50 | 25 | 13 | 12 | 24 | 2 | 361 | 26 | 29 | 0 | 18 | 7 | 2 | 2 | 4 | 6 | 36 | 102 | 509 |
| Չարենցավանի տեղ. | 1755 | 1 | 0 | 1 | 0 | 215 | 0 | 388 | 44 | 13 | 17 | 27 | 4 | 780 | 0 | 6 | 1 | 1 | 6 | 0 | 1 | 10 | 2 | 41 | 72 | 125 |
| Արովյանի ԳԴՏՄ | 11550 | 14 | 1 | 5 | 9 | 2079 | 1 | 1016 | 449 | 54 | 464 | 340 | 41 | 1864 | 49 | 248 | 15 | 68 | 495 | 9 | 178 | 58 | 31 | 952 | 1514 | 1596 |
| Աբովյանի տեղ. | 4759 | 11 | 1 | 4 | 4 | 513 | 0 | 512 | 265 | 37 | 110 | 110 | 17 | 848 | 26 | 81 | 15 | 8 | 324 | 6 | 103 | 26 | 29 | 500 | 490 | 719 |
| Նաիրիի տեղ. | 6791 | 3 | 0 | 1 | 5 | 1566 | 1 | 504 | 184 | 17 | 354 | 230 | 24 | 1016 | 23 | 167 | 0 | 60 | 171 | 3 | 75 | 32 | 2 | 452 | 1024 | 877 |
| Արարատի ԳԴՏՄ | 2153 | 1 | 0 | 0 | 0 | 257 | 0 | 800 | 67 | 10 | 0 | 11 | 1 | 187 | 15 | 7 | 0 | 0 | 1 | 0 | 1 | 0 | 0 | 4 | 0 | 791 |
| Արարատի տեղ. | 2153 | 1 | 0 | 0 | 0 | 257 | 0 | 800 | 67 | 10 | 0 | 11 | 1 | 187 | 15 | 7 | 0 | 0 | 1 | 0 | 1 | 0 | 0 | 4 | 0 | 791 |
| Արմավիրի ԳԴՏՄ | 2854 | 1 | 1 | 0 | 0 | 1285 | 1 | 208 | 229 | 14 | 10 | 74 | 13 | 924 | 8 | 0 | 1 | 1 | 0 | 0 | 4 | 5 | 2 | 14 | 2 | 57 |
| Արմավիրի տեղ. | 2662 | 0 | 1 | 0 | 0 | 1256 | 0 | 163 | 216 | 13 | 9 | 50 | 11 | 853 | 7 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 4 | 5 | 2 | 14 | 2 | 55 |
| Բաղրամյանի տեղ. | 192 | 1 | 0 | 0 | 0 | 29 | 1 | 45 | 13 | 1 | 1 | 24 | 2 | 71 | 1 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 |
| Վայոց Ձորի ԳԴՏՄ | 430 | 0 | 0 | 0 | 0 | 106 | 0 | 107 | 36 | 2 | 6 | 12 | 3 | 48 | 1 | 9 | 0 | 0 | 0 | 0 | 7 | 7 | 5 | 68 | 1 | 12 |
| Եղեգնաձորի տեղ. | 118 | 0 | 0 | 0 | 0 | 35 | 0 | 8 | 16 | 2 | 5 | 1 | 3 | 29 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 4 | 4 | 0 | 0 | 9 |
| Վայքի տեղ. | 29 | 0 | 0 | 0 | 0 | 15 | 0 | 4 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 5 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 2 | 0 | 1 |
| Ջերմուկի տեղ. | 283 | 0 | 0 | 0 | 0 | 56 | 0 | 95 | 20 | 0 | 1 | 10 | 0 | 14 | 0 | 9 | 0 | 0 | 0 | 0 | 5 | 3 | 1 | 66 | 1 | 2 |

Բաժանորդների սպասարկման բաժնի պետ` Ա. Գրիգորյան

# Տեղեկանք

*2007թ. ընթացքում «Հայռուսգազարդ» ՓԲԸ գազիֆիկացված բնակարանների ծխատար և օդատար ուղիների մաքրման*

| NN | ԳԳՄ անվանումը | Բաժանորդների քանակը | «ՀՀԱՄԾ» ԻԱՄ պայմանագրային հիմունքներով | «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ ըստ անհրաժեշտության | Տրամադրված առաջնային պիտանելիության ակտերի քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Երևան | 190205 | *2000* | *17970* | 46704 |
| 2 | Գյումրի | 32129 | *15307* | *4322* | 4336 |
| 3 | Շիրակ | 13649 | *6783* | *352* | 752 |
| 4 | Լոռի | 48300 | *16250* | *4841* | 3525 |
| 5 | Կոտայք | 18085 | *4094* | *6041* | 3953 |
| 6 | Արովյան | 29829 | *33335* | *1036* | 3268 |
| 7 | Տավուշ | 18247 | *5787* | *258* | 1594 |
| 8 | Արմավիր | 20007 | *6878* | *5812* | 3052 |
| 9 | Էջմիածին | 21307 | *17700* | *690* | 2043 |
| 10 | Արարատ | 10732 | *3263* | *383* | 371 |
| 11 | Արտաշատ | 27010 | *12928* | *740* | 3554 |
| 12 | Սյունիք | 17559 | *4200* | *1776* | 2530 |
| 13 | Գավառ | 10548 | *1876* | *310* | 329 |
| 14 | Մարտունի | 18798 | *2024* | *864* | 995 |
| 15 | Սևան | 8527 | *4090* | *980* | 698 |
| 16 | Արագածոտն | 10258 | *6690* | *385* | 1301 |
| 17 | Վայոցձոր | 5950 | *1078* | *0* | 843 |
| *Ընդամենը* | | 501140 | 144283 | 46760 | *79848* |

ՏՏ և ԳՀ վարչության պետ Ա. Գրիգորյան

# ՏԵՂԵԿԱՆՔ

## Բնակիչ-բաժանորդների ներտնային գազասպառման համակարգերի սպասարկման աշխատանքների կատարման վերաբերյալ

| № | Սպասարկման տարածք | Բաժանորդների թիվը, ում մոտ կատարվել է ուսումնասիրություն | Բաժանորդների թիվը, ում մոտ համաձայն իրենց բանավոր հայտարարության 2007 թ-ին այց չի կատարվել | | 2007 թ.-ի ընթացքում կատարված այցերի քանակը | | | | Սպասարկման աշխատանքների ծավալը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ըստ բաժանորդների բանավոր հայտարարության (ճշտվել է սպասարկողի ակտերում առկա ստորագրություններով) | | Ըստ բաժանորդի մոտ գտնվող պայմանագրում առկա ստորագրության | | Անվտանգ օգտագործման վերաբերյալ իրահանգավորում | | Ստուգում օճառա-փրփուրով | | Սարքավորումների | | | Ծխաօդատարների | | |
| | | | | | | | | | | | | | զննում | | կարգաբերում | զննում | | մաքրում |
| № | | | քանակ | % 3սյուն | քանակ | % 2x3սյուն | քանակ | %2x6սյուն | քանակ | % 6սյուն | քանակ | % 6սյուն | քանակ | % 6սյուն | | քանակ | %* | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 1 | Երևան | 500 | 41 | 8,2% | 709 | 74,6% | 385 | 40,5% | 564 | 79,5% | 425 | 59,9% | 532 | 75,0% | 193 | 218 | 38,4% | 21 |
| 2 | Լոռի | 127 | 9 | 7,1% | 214 | 88,8% | 70 | 29,0% | 161 | 75,2% | 185 | 86,4% | 200 | 93,5% | 129 | 83 | 48,5% | 2 |
| 3 | Գյումրի | 107 | 1 | 0,9% | 185 | 91,1% | 127 | 62,6% | 134 | 72,4% | 162 | 87,6% | 164 | 88,6% | 104 | 74 | 50,0% | 6 |
| 4 | Արմավիր | 60 | 7 | 11,7% | 74 | 64,9% | 33 | 28,9% | 66 | 89,2% | 62 | 83,8% | 67 | 90,5% | 34 | 16 | 27,0% | 2 |
| 5 | Կոտայք | 60 | 1 | 1,7% | 87 | 76,3% | 45 | 39,5% | 73 | 83,9% | 69 | 79,3% | 78 | 89,7% | 36 | 39 | 56,0% | 11 |
| 6 | Աբովյան | 80 | 3 | 3,8% | 138 | 90,8% | 100 | 65,8% | 107 | 77,5% | 83 | 60,1% | 107 | 77,5% | 37 | 48 | 43,5% | 10 |
| 7 | Արարատ | 50 | 0 | 0,0% | 84 | 88,4% | 47 | 49,5% | 60 | 71,4% | 67 | 79,8% | 78 | 92,9% | 43 | 24 | 35,7% | 5 |
| 8 | Վայոց Ձոր | 40 | 0 | 0,0% | 68 | 89,5% | 27 | 35,5% | 62 | 91,2% | 54 | 79,4% | 62 | 91,2% | 24 | 44 | 80,9% | 1 |
| | Ընդամենը | 1024 | 62 | 6,1% | 1559 | 80,1% | 834 | 42,9% | 1227 | 78,7% | 1107 | 71,0% | 1288 | 82,6% | 600 | 546 | 43,8% | 58 |

* - տոկոսը հաշվարկվել է 6-րդ սյունակում բերված թվի 80 տոկոսից, քանի որ բաժանորդների 20 տոկոսի մոտ տեղադրված է 1 գազասարք և ծխաօդատար չի պահանջվում